

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կես տարվանը 6 բուբլ:
 Առանձին համարները 7 կոպեկով:
 Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
 Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
 Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
 (Բացի կիրակի և տոն օրերէն):
 Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:
 Յայտարարութիւնների համար վճարում են
 Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՑ 1889 ԹԻՒՆ „ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՒ
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՄՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է՛:
 Բացված է կէս տարվայ բաժանորդագրու-
 թիւներ:

«Մշակ» տարեկան գինն է—10 բ., կէս տար-
 վանը—6 բուբլի:
 Գրվել «Մշակին» կարելի է յՄԲԱԳՐԱՏԱՆԸ
 (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւ-
 նում, տուն թամաշեկի):
 Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ
 հասցեով. Тифлисъ, Редакция «Мшакъ», իսկ
 արտասահմանից. Tiflis, Rédaction du journal
 arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԻՊԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երամագրութեան այս
 տարվայ բերքը. Նամակ վարչակալից. Նամակ
 Շուշուց. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.—
 ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. կրկին մի քանի խօսք
 Բրուսան-Սեկարի զեկուցման մասին. Սալիսը-
 բրի յայտնած միտքը. Մանիսայի պատահած
 ղէպերը. Ատաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
 ՀՆԱՍԻՊԻՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
 —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարբերից.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՅՍ ՏԱՐՎԱՅ ԲԵՐԲԸ

Անդրկովկասի շերամագրական զանազան
 շրջաններից եկած տեղեկութիւններից պարզ ե-
 բեում է, որ այս տարի շերամի բերքը ընդհան-
 րապէս աջող է. իսկ շատ տեղերում էլ հունձը
 այնքան աջող է եղել, որ աւելին սպասել էլ էլ
 կարելի թրինակել շերամատներում մակալից
 ստացվել է 24—26 ֆունտ.—իսկ դա մի այնպի-
 սի թիւ է, որ անպայման բաւարար կարելի է
 համարել: Հնարարն է, մի քանի տեղերում բերքը
 այնքան էլ աջող չէ եղել, բայց այդ էլ միայն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՐԻՉԻՑ

III

Ինչպէս ասեցի, յունիսի 20-ին (8-ին) երեկո-
 կան Parc Monceau ասված ընդարձակ այգիում
 կայացաւ ի պատու հուշանշանի էկսպոնէնտ-
 ների տուած փառաւոր օժանդակութիւնը: Այդ
 տոնախմբութեանը և մենք, կոնգրեսի անդամ-
 ներս հրաւեր ստացանք: Հրաւիրվածները թիւը
 մօտ 50.000 էր և չը նայելով որ այգին ահա-
 զին է, բաւական նեղուածք էր զբոսանքի ժա-
 մանակի: Այդիւմ կառուցված էր մի շքեղ պալլի-
 լիօն, որտեղ տեղադրվեցան քաղաքային վարչ-
 օրութեան անդամները, մինիստրներն և սպա և-
 կա հանրապետութեան նախագահ, պ. կարնո:
 Հիւրերին ընդունում էր ցուցահանդիսի կառա-
 վարիչները մին, պ. Ալֆանս Այգին շքեղ կեր-
 պով լուսաւորված էր և ծառերի վրա կախած
 գոյնզոյն լապտերներով, էլէկտրական և գաղա-
 յին լուսաւորութեամբ զիւրական սպաւորու-
 թիւն էր գործում հանդիսականները վրա: Այգու
 երկու ծայրերին անուամ էին երկու նուագախմբեր:
 Ապա եղաւ հրաշալի հրախաղութիւն:
 Յունիսի 22-ին կոնգրեսի անդամներս հրաւեր
 օտարանք քաղաքային վարչութիւնից, ներկայա-

յորդառատ անձրևներից առաջացած վերին աս-
 տիճանի խոնաւ եղանակի պատճառով:

Այդպէս ուրեմն, բոլոր փաստերից երևում է,
 որ իտալական տեսակի սերմը, թէ արտասահմա-
 նից բերած և թէ տեղական մի քանի մասնա-
 գէտների ձեռքով պատրաստած, արդէն ցոյց է
 տալիս իր բարերար հետեանքը, ազատ պահելով
 մեր երկրի շերամագրութիւնը այն սարսափելի
 անաջողութիւնից, որին նա ենթարկված էր եր-
 կար տարիներից ի վեր, երբ ազգաբնակչութիւնը
 շատ քիչ տեղեկութիւն ունէր իտալական ցե-
 լիւլէր սերմի մասին, այլ առանց բացառութեան
 պահում էր խորատանի կամ եսպոնական կոչված
 տեսակի սերմերը: Այժմ հաստատապէս կարելի
 է ասել, որ գործածութիւնից զուրս է քաշած այդ
 երկու տեսակի սերմը. եթէ այդ տեսակի սերմ
 պահողներ կան, այդ էլ շատ քիչ թիւով, զլիսա-
 որապէս Պարսկաստանի տանանաղլիսի վրա, ո-
 բոյժեմտն այդ տեսակի սերմը մեծ մասամբ թուրք
 վաճառականները բերում են Պարսկաստանից և
 շատ էժան գնով տարածում ժողովրդի մէջ: Շատ
 քաջացել է նոյնպէս և այն շերամագրական
 թիւը, որոնք պատրաստելով այդ տեսակի սեր-
 մեր, իրանց ձեռքով և իրանց բոժոժից, պա-
 հում են այդ սերմը—և, ի հարկէ, վերջումն էլ
 ոչինչ բերք չեն ստանում: Այստեղ անցողաբար
 պէտք է նկատել, որ եթէ խորատանի և եսպո-
 նական սերմը մինչև այժմ էլ շարունակում է
 գործածվել, զրա զլիսաւոր պատճառներով մէկն
 էլ նրա վերին աստիճանի էժանութիւնն է, քանի
 որ նրա մակար մի քանի կոպեկով է վաճառ-
 վում և այդ պատճառով մատչելի է ամենաաղ-
 քատ զիւղացուն անդամ:

Այդ տեսակետից նայելով իտալական սերմի
 աւելի տարածվելու բաւական մեծ արգելք է նրա
 անմատչելի զինը, քանի որ արտասահմանից բերած
 ցելիւլէր սերմը սովորաբար մակարը 1 բ. և նոյն
 իսկ 1 բ. 20 կ. արժէ և աւելի: Առանց բացատ-
 րութեան էլ հասկանալի է, որ այդ գինը ան-
 մատչելի է զիւղական ազգաբնակչութեանը: Ի-
 տալական սերմից այժմ զիւղացի շերամագրանե-
 րը շատ քիչ քանակութիւն են վերցնում պահե-
 լու համար, սովորաբար վերցնում են 10—25
 միսիս, մինչդեռ խորատանի սերմը պահած ժա-
 մանակ վերցնում են նոյն իսկ մինչև մի ֆունտ,
 և այդ առաջին զանախութիւնը պահում են նա-
 հապետական սովորութեամբ մի շատ փոքր տա-

նալ «Hôtel de Ville» ասված քաղաքային վար-
 չութեան պալատը: Անկարգաբեր է այդ պա-
 լատի դահլիճների շքեղութիւնը: Ես եկայ, երբ
 զրեթէ ամենքը արդէն հաւաքված էին: Ինձ ան-
 միջապէս ներկայացրին ժիւլ Սիմոնին, որովհետև
 առաջին ընդհանուր ժողովում ևս միջոց չը գտայ
 նրան առանձնապէս ներկայացրած լինելու, այլ
 մենք բոլորս, կոնգրեսի օտարազգի անդամներս,
 միասին ներկայացանք նախագահին:
 Մի քանի րոպէից յետոյ քաղաքային վարչու-
 թեան նախագահ, պ. Շոտան, հրաւիրեց մեզ
 անցնել քաղաքային վարչութեան նիստերի դահ-
 լիճը, որտեղ մենք տեղաւորվեցանք ամֆիթեատ-
 րով շինված բազիլիկների վրա, իսկ վար-
 չութեան նախագահը վարչութեան անդամներով
 որոնք բոլորն էլ ֆրանկներով էին և կրում էին
 երեք գոյնի ֆրանսիական ազգային ժապաւէնը,
 բարձրացան մի ընդարձակ ամրոնի վրա և պ.
 Շոտան ողջունեց մեզ մի սրտաշարժ ճառով, որ-
 ին կոնգրեսի կողմից պատասխանեց նախագահ
 պ. ժիւլ Սիմոն, շնորհակալութիւն յայտնելով
 քաղաքային վարչութեանը կոնգրեսին արած սի-
 բալի ընդունելութեան համար: Ապա վարչու-
 թեան նախագահը հրաւիրեց մեզ մի ուրիշ ըն-
 դարձակ դահլիճ, նախաճաշի անելու համար:
 Այդ ժամանակ զինուորական ներգաշնակ, և ըն-
 տրեալ երաժիշտներից բաղկացած օրկեստրը
 սկսեց «Մարսելիէզն» անել: Նախաճաշիկը շատ
 թեթիւ էր և բաղկացած էր քաղցրեղեններից, այլ

րածութեան վրա,—մի հանգամանք, որ, ի հարկէ,
 ոչինչ բերք խոստանալ և տալ չէ կարող: Ա-
 կայն չը նայած այն հանգամանքին, որ իտալա-
 կան սերմից 10—25 միսիս են վերցնում,—որը
 ինքն ըստ ինքեան բաւական էլ է,—բայց և այն-
 պէս զիւղացու համար զժուար է միանգամայն 10
 —25 բուբլի սերմի վճարել, չիմանալով թէ ար-
 դեօք բերք կը ստանայ, թէ ոչ: Հէնց այդ է
 պատճառը, որ այժմ Անդրկովկասում շատերը
 սերմի առևտրով են զբաղվում, և բերել տալով
 նոյն իսկ շատ լաւ տեսակի իտալական կամ
 ֆրանսիական սերմ, և զուցէ հետը խառնելով
 այստեղ օղատրաստած կասկածելի սերմեր, վա-
 ճառում են զանազան պայմաններով զիւղացուն
 և այդ տեսակի սերմը, պէտք է ասած, բաւական
 դրում է զուտ իտալական, կամ հետադոտութեան
 միջոցով պատրաստած իտալական տեսակի սեր-
 մերի նշանակութիւնը:

Այդ պատճառով իտալական տեսակի սերմի
 էժան գնով ժողովրդի մէջ տարածելը պէտք է
 լինի Անդրկովկասում հիմնած և զլիսաւորապէս
 Թիֆլիսի օրինակելի շերամատան զլիսաւոր նոյա-
 տակը: Էժան գինը մի կողմից զուրս կը ըլի խո-
 րատանի և եսպոնական հիւանդ սերմերը, և միւս
 կողմից ամեն կողմ կը տարածի իտալական սեր-
 մը,—կամ ուրիշ խօսքով աւելի հաստատ կը
 դարձնի մեր երկրում շերամագրութեան աղա-
 ճառով, որ եթէ բոժոժի գինը այնպէս էժան կը
 լինի, ինչպէս այս տարի է, երբ թաց բոժոժը
 շատ տեղ ծախվում է 10—12 բուբլիով, այն
 ժամանակ համարեա թէ ձեռնտու չէ կարող լի-
 նել ազգաբնակչութեան համար՝ ահալին փող
 տալ սերմի, և ահալին ծախսեր անելով վեր-
 ջումը բոժոժը ծախել չնչին գնով,—կամ ուրիշ
 խօսքով՝ ոչինչ աշխատանք չունենալ:

ՆԱՄԱԿ ՎԱՐՏԱՎԱՅԻՑ

Յունիսի 15-ին

Վարչական շատ կողմերով չէ նմանում Ռու-
 սաստանի ուրիշ քաղաքներին. թէ տեղում և թէ
 կենտրոն զանազան կողմերով նա աւելի նման է
 եւրօպական քաղաքներին, միայն այն զանազա-
 նութեամբ, որ այստեղի ժողովուրդը համեմատա-
 բար աւելի աղքատ է. հարստութիւնը հիւանդ

տարրի մօտ է: Այստեղի զլիսաւոր առևտուրը
 հրէաների ձեռքումն է, և այդ է պատճառը, որ
 շաքաթ օրերը համարեա թէ խանութների մեծ
 մասը փակված է լինում: Բացի այն որ զլիսաւոր
 քաղաւ առևտուրը գտնվում է հրէաների ձեռքում,
 նոյնպէս նրանց ձեռքումն են և արհեստները: Լե-
 հացիները թէ մինչև իսկ արհեստների և թէ
 առևտուրի կողմից՝ նրանց հետ համեմատելով
 երկրորդական տեղ են բռնում վաճառականական
 աստղաբիզնէսի կան յայտնի գործարաններ, որոնց
 տէրերը թէև քրիստոնեաներ են, սակայն ընդ-
 հանրապէս լեհացիներ չեն, այլ գերմանացիք և
 ուրիշ ազգի պատկանողներ: Սակայն չը նայած
 իրանց հարստութեան, հրէաները ինչպէս և ամեն
 տեղ, նոյնպէս էլ այստեղ, շատ գծուծ կենք են
 վարում. հազնվում են աղքատ կերպով և կեղտոտ,
 մինչդեռ լեհացի ազգաբնակչութիւնը, հարուստից
 սկսած մինչև ամենապիտին չքաւորը, մեծ թէ
 փոքր հազնվում են մաքուր, և վերջին մտղայով,
 զիտեն իրենց պահել և վերին աստիճանի պատ-
 ւաւոր ժողովուրդ են:

Հայերի թիւը այստեղ հասնում է 50—60 հո-
 ղու, և ամենքն էլ պարսպովում են վաճառակա-
 նութեամբ: Կան մի քանի զինու խանութներ, ո-
 ռոնք ստանում են կովկասից գինի և զբաղվում
 են կովկասեան գինիների առևտրով:

Լեհացիները զեռ նոր են սկսում կովկասի գի-
 նի բանացնել, այն էլ շատ քիչ քանակութեամբ.
 Եթէ շատ ու քիչ այստեղ կովկասեան գինիները
 վաճառվում են, դա էլ առաստանացիների շնոր-
 հով է, որոնք և զործ են ածում կովկասի գի-
 նին: Բացի զինուվաճառութիւնից, մնացած հայե-
 րը այստեղ պարսպում են ուրիշ առևտրով,
 կամ կոմիսիօներութեամբ, և պէտք է ասել ա-
 մենկին չեն կարողանում միջոց դ շլ տ վ ա ժ հրէ-
 աների հետ: Թող ներքի մեզ նկատել, որ այս
 ուր փոքր խումբ հայերը պահպանում են և այս
 հետև քաղաքում մի քանի հայկական սովորու-
 թիւներ. դրանցից շատերը միմեանց մէջ սաս-
 տիկ թշնամի են, միմեանց բաւական վնասում են
 և այդ պատճառով առանձին աջողութիւն հայե-
 րը այստեղ չունեն: Այդ հանգամանքը շատ է
 դղել այստեղ փոքրիկ թիւով հայերի պատկու-
 թը, շատ քիչ ընկերակցութիւն ունեն մի-
 մեանց մէջ, թէև ցամախի էր և բնական
 որ մի օտար և հետև քաղաքում սրանք մի-

աւելից (որը ի միջի այլոց պէտք է ասեմ շատ
 համակրելի և խելացի երիտասարդ է), ոչ մի պա-
 րիզարնակ հայի հետ տեսնվելու:

Մոռացայ ասել, որ այստեղ, Պարիզում, թէ
 կոնգրեսի նիստերի ժամանակ (բացի առաջին
 հանդիսաւոր, բացման նիստից) թէ բոլոր հան-
 զիսաւոր ընդունելութիւնների ժամանակ, տղա-
 մարդիկ սովորութիւն ունեն հայերը հասարակ
 սև սիրտակներ, մոխրադոյն վարտիկներով և ոչ
 թէ ֆրանկներ Առհասարակ այստեղ ընդուն-
 ված է հազնել ևս սիրտակ ամրող օրը, մինչև
 6 ժամ երեկոյեան, իսկ միայն 6 ժամից սկսած,
 ճաշերին և երեկոյեաններին՝ ֆրակ են հագնում:
 Երօպացիները ևս միակերպ հագուստների մէջ
 դարմանալի և տարօրինակ սուպաւորութիւն են
 գործում ասիացի և աֆրիկացի կիպոնեաների
 գոյնզոյն հագուստները: Այդպէս էր, օրինակ,
 Monceau այգիում կայացած զբոսանքի ժամանակ
 օտարազգի կիպոնեաները (մարդիկ և կանայք)
 Տունիդի, Յելլիսի, Ալիֆրայի, Հնդկաստանի, Ես-
 պոնիայի, Չինաստանի, Պարսկաստանի և այլ
 երկրների ներկայացուցիչները, լցնում էին յի-
 չնալ այգին և հերթով բարձրանալով այգու մ.ջ.
 տող կառուցված պալլիօնի սանդուղտները,
 ներկայանում էին պ. կարնոյն, Ալֆանսին, մի-
 նիստերին և քաղաքային վարչութեան անդամ-
 ներին:

Գրիգոր Արժուհի

մեանց մօտ լինելն: Թողնելով այս նշանաւոր քաղաքը մեծ մեծ դէպքերի մասին խօսելը, որոնք մանրամասնօրէն արձանագրուած են կրթութեան մասին յայտնի կը լինեն, միայն մի քանի խօսք եղանակներով մասին կատարելով: Մինչև ամսին 8-ը այստեղ եղանակը շատ շոք էր, և մի քանի անգամ ջերմաչափը բարձրանալով հասել էր 35-ին: Բայց 8-ին մի սաստիկ կարկտանոս անձրև զաւրց յետոյ, որ տեղեց մօտ 3 օր, եղանակը բաւական մեղմացաւ, և անս մի քանի օր է որ այլ ևս սարսափելի չըզ է անուամ: Անձրևը, ինչպէս ասեցինք, ամբարն սաստիկ էր, որ 3 օր միայն մէջ փողոցներով սկսեց կատարել ջուր վազել, այնպէս որ մի քանի տեղ երթնակութիւնը բոլորովին դադարեց, շատ խանութներ լցվեցին ջրով, և քաղաքը մօտ երկու հարիւր հազարի վերջաւ կրեց:

ՆԱՍՏԱԿ ԵՈՒՐՆԻՑ

Յունիսի 20-ին

Շուշու մշակները համարեա թէ բացառապէս կազմուած են Պարսկաստանի Ղարաղաղ գաւառի զիւղացիները: Աւելորդ է ասել, որ դրանք զալիս են Շուշի տնտեսական վատ հանգամանքների պատճառով: Մշակները մէջ կարելի է գտնել 10 տարեկան երեխաներից մինչև 60 տարեկան արդարաւոր: Գրանց թիւը ձմեռը հասնում է մօտաւորապէս 150-ի, իսկ ամառը՝ 300-ի: Ամառը մշակները թիւը աւելանում է այն պատճառով, որ ամառը դրանց մեծ մասը գնում է արտեր հնձելու, իսկ անասնը՝ խաղողի այգիներում բանելու: Գրանց քաղաքում օրեկան ստանում են միջին թիւով 40 կռակէ, որը, ի հարկէ, ողորմելի օրավարձ է: Բայց չը նայելով որ նրանք ստանում են այդքան չնչին օրավարձ, այնու ամենայնիւ, եթէ առիթ է պատահում՝ կարում են այդ անպաշտպանների օրավարձը... Մարմնի վանական ոյժերը չեն վարձատրուում կուշտ կեանքով: Կերպը ցամաք հաց է, երբեմն էլ սոխ օւ հաց: Ամառը կերակրի փոխարէն ուտում են էփած աղի մրգեր, որոնցից շատ անգամ ստանում են զանազան հիւանդութիւններ: Ստանալով չնչին օրավարձ, մշակները չեն կարողանում մարդավարի բնակարաններ վարձել: Նրանք բնակվում են մօթ, կեղտոտ և խոնաւ բնակարաններում: Ումանք էլ զիջելու են հարուստ քաղաքացիներին աներում, որպէս պահապաններ: Յերեկ մշակների տեղը մէջը անն է, ամառը անգործներին կը տեսնէք մէջը: Կից փողոցներում թափված, իսկ ձմեռը այստեղ-այնտեղ ցրտից կուշ կեանք, սպասում են աշխատանքի: Ղարաղաղի մշակը, որը զանազանում է քաղաքացիներից կապույտ արխալուզով ու տրեխներով, երբեք չէ մտածում իր հայրենիքը. նա այստեղ չէ պակսվել, երբ նա մի կերպ մի փոքր գումար է ձեռք դրած, շտապում է տուն վերադառնալ, և թիչ չէ պատահում, որ սահմանը անցնելու պէս՝ թափանցում է հէնց իրանց գիւղի բէջից, որը վաղօրոք իմանալով նրա վերադարձը, սպասում է ճանապարհին... Իսկ չպտերը ինչ դրութեան մէջ են վերադառնում իրանց հայրենիքը, այդ պարզ է...

Կիրակի, ամսին 18-ին, այստեղ կատարվեց օրիորդաց դպրոցի տարեկան հանդէսը՝ նոյն դպրոցի դահլիճում: Հանդիսին ներկայ էր մեծ բազմութիւն, իսկ կանանց սեռից 50—60 տղայիները և օրիորդներ, որոնք հրաւիրված էին Նրկի դպրոցական ակադ խնջոյք է, ուր ներկայ գտնվողները պէտք է հրաւիրվեն... Նրկական է, որ հասարակութիւնը ամենին ներկայ չէ գտնվում արդար զարմացի ակտին, իսկ օրիորդաց դպրոցի ակտին ընդհակառակն մեծ բազմութիւն է հաւաքվում: Նրկի օրիորդաց դպրոցի առաջադիմութիւնը աւելի հետաքրքրական է, քան թէ տղայոցը, այն դպրանոցինը, որը նշանակութիւն ունի ամբողջ Ղարաղաղի համար... Ինչ և իցէ: Հանդէսը բացվեց մի երգով, որը երգեցին դպրոցի աշակերտուհիները: Ապա դպրոցի տեսուչ՝ պ. Ջ. Իլյանեան կարգաց ուսումնական տարեկան հաշիւը: Հաշիւը յետոյ աւարտած աշակերտուհիներին մի քանիսը կարգադրին ճաւեր և ոտանաւորներ: Ամեն մի ճաւեր և ոտանաւորից յետոյ աշակերտները զեղեցիկ կեղծով երգում էին: Աւարտածներին վկայականներ տրվեցան, որով և վերջացաւ հանդէսը: Հանդէսից յետոյ հասարակութիւնը մտաւ միւս սենեակները՝ աշակերտուհիներին ձեռագործները գնելու: Ձեռագործներից բաւական ծախվեց:

Տեղիս բնակական դպրոցից այս տարի աւարտել են 7 հոգի, որոնցից 6-ը հայեր են, իսկ մէկը քիւրդ է: Թուրքերը առաջադիմութեան գործում դժբաղդաբար շատ թոյլ են, դրա պատճառով կարող է լինել ի միջի այլոց և այն, որ թուրքերից այս տարի ոչ ոք չէ աւարտել, չը նայելով որ վեցերորդ դասառնում կան մի քանի թուրք աշակերտներ: Այդ դպրոցում թուրքերի թիւը քանի գնում գգալի կերպով պակասում է:

ՆԱՍՏԱԿ ԴՈՒՐՆԻՑ

Յունիսի 19-ին

Երէկ, յունիսի 18-ին, համեստ հանդիսով, որին ներկայ էին բաւական թիւով տիւրիներ և պարոններ, վերջացան տեղիս ծխական դպրոցի ընտելութիւնները: Քննութիւնների այսքան ուշ վերջանալու պատճառն այն է, որ բաւական ուշ ըսկավեցին, իսկ այդ հանգամանքը բացատրել կարելի է միմիայն նրանով, որ մեր քաղաքի դպրոցում կարգին ուսուցիչ սկսեց ոչ թէ սեպտեմբերի մէկից, ինչպէս առհասարակ ընդունված է, այլ մի ամբողջ ամիս ուշ՝ այն է հոկտեմբերի հինգից: Քննութիւնները ընդհանրապէս աջող էին, և մի կողմ թողնելով ընտելութեան մանրամասնութիւնները, մենք մի քանի խօսք միայն կատարեցինք: Գրանցի վերջին տարիների գործունէութեան մասին:

Ղարաղաղում ծխական դպրոցը հիմնված է 1870 թիւին, ուրեմն նա գոյութիւն ունի ամբողջ տասն և ինը տարի: Այդ ժամանակամիջոցում քիչ արգելքների չէ հանդիպել մեր դպրոցը, և եթէ այսօր նա չէ փակված, և կարողացել է պահպանել իր գոյութիւնը, — դա պէտք է վերաբերել ժողովրդի սիրուն և հոգաբարձութեան գործունէութեանը: Բայց այդքան տարիների ընթացքում մեր դպրոցը երբեք չէ գտնվել այնպիսի ծաղկած դրութեան մէջ, որպիսի դրութեան մէջ գտնվում է այսօր: Բացի գոյութիւն ունեցող բաժանմունքներից, հոգաբարձութիւնը դիտարկութիւն ունի բանալու և մի բաժանմունքը տղայոց համար և մի բաժանմունքը օրիորդների համար: Բըպրոցը, որ առաջ երկու ուսուցիչ պահելու հաջիւ կարողութիւն ունէր՝ այժմ ունի երեք ուսուցիչ: Եւ մէկ ուսուցչուհի, իսկ դալ տարուց հոգաբարձութիւնը մտադրութիւն ունի նրանց թիւը աւելացնել երեքով: Կարծում ենք, որ այս փաստերը բաւական պերճալիս են: Գարոցի այսպիսի յառաջադիմութեան համար, ինչպէս ասեցի, պէտք է նորհակալ լինել զլիսաւարապէս ժողովրդից: Եւ իրաւ, ժողովրդը երբեք չէ մերժել օգնել դպրոցին թէ նրկականապէս, թէ ուրիշ միջոցներով: Բացի տեղիս հայ հասարակութիւնից մեծ օգնութիւն հասցնում են մեր դպրոցին և դանազան քաղաքացիները, որինակ Բազուրի՝ մի կողմից «Մարալախիական ընկերութիւնը», որը առայժմ տալիս է 200 բուրլի տարեկան, միւս կողմից ուրիշ յայտնի անձինք, որոնք զրկելով անփոփոխ անգամ, վճարում են տարեկան 100-ական բուրլի: Նորիստաններ կան և ուրիշ քաղաքներում, որինակ Պետերբուրգ և ուրիշ տեղեր: Այս բոլորի հետեանքն այն է, որ դպրոցն այժմ ունի 6000 բ. դրամադրուս, ցաւալի է միայն, որ դպրոցը առայժմ սեփական շինութիւն չունի, այլ զետեղված է մի մասնաւոր տան մէջ: Մրանից դուրս է հանված ուսումնարանի շինութեան վարձը, ըստ որում շինութեան տէրը նայնպէս դպրոցի նախարարութեանը է: Յամենայն դէպս ցանկալի է և կարեւոր, որ Ղարաղաղում սեփական և միանշանակապէս առողջապահական և մանկավարժական տեսակետից յարմար շինութիւն իր համար:

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐՆԻՑ

Մեկ հաղորդում են իբրև լուր, որ Աստրախանի թիմի առաջնորդ Գեորգ Եպիսկոպոս Սուրենեան թիմական առաջնորդի պաշտօնով պէտք է տեղափոխվի մի ուրիշ թիմ:

Ղօնդօնից, յունիսի 15-ից «Հիւսիսային հեռադրական գործակալութիւնը» հեռագրում է. «Հասարակութեան ժողովի այսօրվայ նիստում Ֆերդիուսըն յայտնեց, որ կառավարութեանը ոչինչ յայտնի չէ այն յայտարարի մասին, որ իբրև թէ Վանի հայերը ուղարկել են թիւրք կառավարութեանը և որի մէջ հեղձում են թիւրքերի ձեռքով նորերը կատարված բռնութիւնները: Ֆերդիուսըն աւելացրեց, որ կառավարութեանը նոյնպէս ոչինչ

յայտնի չէ Մուսա բէկի էրզրում գնալու մասին, որտեղից նա կ. Պոլիս գնալու մտադրութիւնն է ունեցել: Ֆերդիուսըն յարակցեց, որ ոչինչ տեղեկութիւն չը կայ երեք հայերի կարծեցեալ սպանութեան մասին»:

Յունիսի 24-ին Թիֆլիսի զանազանների բանակի թատրոնում, յօգուտ խարկօլի ուսանողների առամ ներկայացումը աջողված կարելի է համարել, որովհետև թատրոնը համարեա թէ լի էր հասարակութեամբ, և անկասկած 500 բուրլոց աւելի արդիւնք կը մնայ յօգուտ չքաւոր ուսանողների, որով և իրազորված կարելի է համարել թատերասէրների զլիսաւոր նպատակը:

Կիրակի, յունիսի 25-ին, պ. Պարոն-Սարգսեան տեղական թատրոնասէրների խմբի մասնակցութեամբ, ներկայացրեց բանակի թատրոնում «Մանկական բժիշկ» անունով մեղօգրաման, հինգ գործողութեամբ: Մեղօգրամա առելով ընթերցողը պէտք է հասկանայ, որ պիէսայի մէջ կան ամեն տեսակ անբնական և շինծու անձնաւորութիւններ ու տիպեր, որոնք ոչինչ նմանութիւն չունեն իրական կեանքի հետ: Օրինակ, վերոյիշեալ պիէսայի մէջ երկխոսի խում են ծնողների ձեռքից, նա՛ տասն և վեց տարեկան դառնալուց յետոյ մեռնում է և ապա յարութիւն է առնում և այլն և այլն... Մի խօսքով չարժէ խօսել ոչ պիէսայի և ոչ էլ խաղացողների մասին: Անցնենք զաւելջոյն: Պ. Ամիրջանեան մի քանի հայերէն և ռուսերէն բօմանսներ երգեց բաւական աջող կերպով: Կարոնի ձայնը թէն մի փոքր անմալ է, բայց բաւական զօրեղ և դուրեկան է: Ապա պ. Միրզեան պատմեց մի քանի անցքեր ժողովրդական կեանքից, որով մեծ զուարճութիւն պատճառեց ներկայ հասարակութեանը: Պ. Աղաբախ ևս մի քանի ոտանաւորներ կարգաց և այդ բոլոր բաւականութիւնը վերջացաւ զիջելայ ժամը 2-ին միայն...

Կ. ՊՈԼՍԻՑ մեկ գրում են, որ անգլիական մի քանի լրագիրների կողմից թղթակցիներ եկան Կ. Պոլիս, որոնցից մէկը յատկապէս Հայաստանի մասին: Մի քանի հայերէն և ռուսերէն բօմանսներ երգեց բաւական աջող կերպով: Կարոնի ձայնը թէն մի փոքր անմալ է, բայց բաւական զօրեղ և դուրեկան է: Ապա պ. Միրզեան պատմեց մի քանի անցքեր ժողովրդական կեանքից, որով մեծ զուարճութիւն պատճառեց ներկայ հասարակութեանը: Պ. Աղաբախ ևս մի քանի ոտանաւորներ կարգաց և այդ բոլոր բաւականութիւնը վերջացաւ զիջելայ ժամը 2-ին միայն...

Մեկ հաղորդում են, որ այն ցուցակը, որի մէջ պէտք է մտցնել հայոց դպրոցներում վարձատրութիւն և վարժուցիչներ անելու իրաւունք ունեցողների անունները, մինչև օգոստոս ամիսը հազիւ կը հրատարակվի:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մի համակրելի միտք է յղացել, — պահել մի յատուկ բժիշկ քաղաքի առողջապահական կողմի վրա հսկելու համար: Քաղաքային վարչութիւնը, որ այդ մասին ակնի առաջ պէտք է մտածել, տարաբաղդաբար իր այդ մտքի իրազորումը դեռ էլի մի քանի ամսով յետաձգել է, մինչդեռ մի այդպիսի բժիշկ գործունէութիւնը աւելի կարեւոր էր այժմ, ամառը, երբ շոք եղանակների պատճառով քաղաքը թէ մաքրութեան և թէ ուտելիքների կողմից առանձին հսկողութեան է կարօտ:

Լուսն ենք, որ շուտով պէտք է ապագրութեան յանձնվի հանդուցեալ Ստեփաննոս Պալասանեանի աշխատասիրած «Հայոց պատմութիւնը», որը նա հասցրել է մինչև մեր օրերը, և որը տարբերվում է մինչև այժմ լրջու տեսած «Հայոց պատմութիւններից» իր ընկալական ուղղութեամբ և բազմակողմանի տեղեկութիւններով:

Թիֆլիսի Մուշտաղի կողմէ այգիում, պետական կառավարչների միաստորութեան հաշուով շինած օրինակելի շերամատունը այս տարի արդէն աւաջին անգամ օրինակելի ձեռով շերամ պահելով պատրաստուել է մեծ քանակութեամբ սերմ: Այդ սերմը իր ժամանակին պէտք է ներթափվի հետազոտութեան և մի մասը պէտք է վաճառահանվի, իսկ միւս մասը, ինչպէս հաղորդում են, պէտք է ձրիաբար բաժանվի զիւղական դպրոցներին՝ տեղեկ անձանց հսկողութեան ներքոյ շերամապահութեամբ պարապելու համար: Այդ շերամատունը, բացի բուն շերամապահական բաժնից, ունի և մի հարուստ մուգ էլ յ, որի մէջ ղրկուողված են շերամապահութեան վերաբերեալ հարուստ ժողովածուներ, — առողջ և հիւանդ որդիների մեծանք մօղէներ, ամեն տեսակի բո-

ժօժներ, թեյեր, մետաքսեայ տեղական գործուածներ, թիֆլիսե տեսակներ, տերեւահատութեան համար գործածվող տեղական գործիքներ և այլն, այնպէս որ հետաքրքրվող այցելուս ուսումնասիրելով այդ բոլորը, կարող է շերամապահութեան մասին գէթ մի թոյլ հասկացողութիւն կազմել: Մի բան միայն շատ աչքի է ընկնում այդ բոլորի մէջ, այդ այն շերամութիւնն է, որը տիրում է շերամատան մէջ: Այդպիսի շերամատուն այցելելով զիւղական ազգաբնակչութիւնը դժուար թէ համոզվի, որ կարելի է այդ բոլորը գործադրել առօրեայ կեանքում, քանի որ զիւղացիները չունեն ոչ նոյն իսկ այդ բոլորի հետ փոքրիկ նմանութիւն ունեցող բնակարաններ և ոչ էլ այդպիսի յարմարութիւններ: Պատճառներում հիմնված և հիմնվելի շերամատները պէտք է աշխատեն մի փոքր յարմարվել ժողովրդի հանգամանքներին, քանի որ զիւղացիների անապին մեծամասնութիւնը միջոց չունի այդ բոլոր պահանջները իրագործելու: Պարզութիւնը պէտք է լինի օրինակելի շերամատների առաջին յատկութիւնը:

Յօդուտ Բաֆֆիի գրքերի հրատարակութեան ստացանք Գանձակից պ. Գ. Խաթանեանի ձեռքով մի խումբ երիտասարդների մէջ հանգանակած 9 բուրլի:

Մօսկվայի համալսարանի մի քանի պրօֆէսորներ մի քանի ժամանակ առաջ խնդրեց էին տուել կառավարութեանը Մօսկվայում նորից բանալու բարձրագոյն իրական կուրսերը: Այդ խնդրերը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, մերժված է ան պատճառով, որ այդ հարցը ըննող յանձնաժողովը այդ մասին դեռ ոչ մի կանոնադրութիւն չէ մշակել:

Հին-ՆԱԽԻՉԵԱՆԻՑ մեկ գրում են. «Ներկայ լինելով այստեղ հայոց դպրոցների ընտելութիւններին, որոնցից միայն ռուսաց լեզուի, կրօնի և մասամբ էլ հայոց լեզուի ընտելութիւնները աջող կարելի էր համարել, — մենք պարզ կերպով նկատեցինք այն աճը և երկիւղը, որը տիրում էր աշակերտների և աշակերտուհիների վրա, երբ նրանք պատասխանում էին ինչպէս երևում է այս դպրոցներում վարժապետների և աշակերտների յարաբերութեան մէջ տիրում են զեռ հին խալիֆայական շատ ձևեր, որոնց շնորհով երկխոսները գտնվում են մի տեսակ մշտական երկիւղի աղբեցութեան տակ: Դա մի աններելի պակասութիւն է դպրոցի համար»:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ անասնը Պետերբուրգ պիտի գայ բուխարական դեսպանութիւնը՝ էմիրի որդու հետ միասին: Բուխարայի թագաւթաւորը պէտք է մանի պատերի դպրոցը՝ ուսանելու համար:

Թիւ ԱԻԻՑ մեկ գրում են. «Յունիսի 19-ին Ջ. Իլյանեան քաղաքի ուսուցիչ Գ. Խ. ի հրահրմամբ գնում են: — Թիւ ԱԻԻՑ 17 վերստ հեռաւորութեան վրա գտնվող — Ալաշկերտի ուխտատանին ըննիչ Մ. Մ. և ուսուցիչ Ն. Ա. Զաչից յետոյ Գ. Խ. վերցնում է հրացանը, լցրած կոտորակներով, ուղղում է Ն. Ա. ի վրա և արձակում կոտորակները անցնում են աշակերտեան զմբի մօտով, բայց բարեբաղդաբար ուսուցիչը ազատվում է և մընում բոլորովին անվնաս»:

ՄԵՂՐԻԻ զիւղից մեկ գրում են. «Ամառը ըսկավել է բայց այս կողմերում գարնանային եղանակ է: Գարունը մանաւանդ մայիսին անձրևային էր, որից այժմ երևում են թէ խաղողի և թէ բամբակի վրա հիւանդութեան նշաններ — առաջինի վրա «թոզ» կողմէ հիւանդութիւնը, վերջինի վրա «ափաթ» կողմէ հիւանդութիւնը, որոնք լու յոյսեր չեն խոստանում զիւղացուս: Բօժօժի հունձը վերջացաւ. այս տարի համեմատաբար առատ էր բօժօժը: Շերամի որդերը, թիչ բացառութեամբ, առողջ էին, և այդ էր պատճառը, որ տերեւի մեծ պակասութիւնը զգացվեց: Բօժօժը համարեա բոլորն էլ խոտական տեսակից էր: Միջին թիւով իւրաքանչիւր մօխալից ստացվել է 15—18 ֆունտ բօժօժ: Գինն էր 11—12 բ. 60 կ., որ համեմատելով անցեալ տարիների զինքի հետ, շատ էժան է: Այստեղ մեծամասնութիւնը սերմը վերցնում է առանց փողի — պայմանով կամ բօժօժի մի մասն է տալիս սերմատիրոջ և կամ բօժօժը որոշակ գնով տալիս է այն վաճառականին, որը սերմ է բաժանել: Այս

տարի մեծամասնութիւնը սերմ վերցրել էր Օր-
դուքով մի քանի վաճառականներէրց այն պայ-
մանով, որ ստացած բոժօժը 12 ր. 50 կօպէկով
սերմատիրոջ վրա ծախէ, սակայն մեր վաճառա-
կանները իրանց տուած պայմանին նշանակութիւն
չը տալով, բոժօժը գնեցին աւելի պակասով, ա-
սելով թէ այդ գնեցող իրենք կը վնասվեն և այ-
լնու գիւղացիին ստիպված տալիս է բոժօժը, ո-
րովհետև նա երկար չէ կարող պահել, քանի որ
երկիրը է կրում մի գուցէ թիթեռները դուրս
գան և բերքը ոչնչանայ և երկրորդ ինչպէս պա-
հէ, քանի որ փող է հարկաւոր նրան: Յանկալի
է, որ այդ վաճառականները փոքր ինչ ազնու-
թեամբ վարվին այդպիսի դէպքերում:

ԻԳՊԻԻՅ մեզ գրում են. «Այստեղի երկսեռ
դպրոցների տարեկան հարցաքննութիւնները վեր-
ջացան ամսի 9-ին Ալեքիւն երկու օրվայ ջըն-
նութիւններին ներկայ էր թեմիս առաջնորդը,
որը գոհ մնաց քննութիւններից: Յունիսի 18-ին
կատարեցին տարեկան ակտը, որի ժամանակ պա-
սազ ուսուցիչ Անտոնեան կարգաց ուսումնական
հաշիւը, որից երևցաւ, որ արական դպրոցում
եղել է 174 աշակերտ, որոնցից 70% փոխադր-
վում է, 30% մնում Օրիորդաց դպրոցում եղել
է 43 աշակերտուհի. սրանցից փոխադրվել է
49%: Ապա դպրոցների գրադարանային պա-
րտութեան համաձայն հաշիւ ներկայացրեց, ո-
րից երևցաւ հետևեալը. գրադարանը 1888 թ-ի
փետրվարի 1-ից մինչև ներկայ յունիս ամիսը
մուտք է ունեցել 157 ր. 84 կ., ելք ունեցել է
133 ր. 63 կ. գրքեր նուէր են ստացվել Բագրի
Մարգարիտական ընկերութիւնից, Երևանից, և տե-
ղացի երիտասարդներից: Հայերէն գրքերի թիւն
է 300, բացի դրանցից կան և պարբերական հը-
րատարակութիւններ: Բուսերէն գրքերի թիւն
է 57—գլխաւորապէս մանկավարժական: Գրադա-
րանն ունեցել է 53 ընթերցող և 636 կտոր գիրք
դուրս է գնացել կարգաւոր: Այս գրքերից ամե-
նաշատ ձեռք է ձեռք անցել են Բաժնիքի գրքերը
«Սամուէլ» և «Կայծեր», յետոյ տրվին Տիւրքալի
«Արաբսեայ» և «Սիրանոյշը», յետոյ միւս գրքե-
րը: Կրթականութեան արժանի են տեղական ե-
րիտասարդները, որոնք իրանց նուէրներով աջակցե-
ցին ուսուցչական խմբին գրադարանը հաստատ
հիմքի վրա դնելու»:

ԻԳՊԻԻՅ մեր թղթակիցը գրում է. «15—20
օր առաջ Բարդուղեան լեռնաշղթայի մէջ երկրա-
շարժ է տեղի ունեցել. պատմում են, որ ճեղք-
վածներ են առաջացել: Անձամբ տեսնելուց յե-
տոյ այդ մասին մանրամասն տեղեկութիւններ
կը հաղորդեմ: Յանքերը, պտուղները և միւս մըր-
ցերն այս տարի շատ առատ են Սուրմայուտում:
Բամբակն ու ցորենը, որ գաւառիս ամենազիլա-
ւոր բերքերն են, այս տարի առատ բերք են
խոստանում: Յոյս կայ, որ անցեալ տարիների
թշուառ գրութիւնը կիսով չափ կը մոռացվի:
Հունձը նոր է սկսվում»:

Պետական կալուածների մինիստրութեան մէջ
քննվում է Բաթումի շրջանը ուսուցչական-
ներով բնակեցնելու հարցը: «Моск. Вѣд.» լրա-
գրի խօսքերով, նահանգական զլխաւորի տեղա-
կան վարչութիւնը հնարաւոր է համարում առ-
ժամանակ այդ նպատակին յատկացնել մօտ 500
հողաբաժիններ՝ 2-ից մինչև 6 դէստատին մեծու-
թեամբ:

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ նկատու-
թիւնը. «Աքսորվածների կրօնական դէպք-
մունքներին լիութիւն տալը, ինչպէս երևում է,
մի զգալի պահանջ է ամեն մի քաղաքում: Կա-
մար Դեոտ անգամ առթիւ ենք ունեցել այդ բա-
նում հաստատելու Այս օրերու էլ Տօրսկիի տա-
ժանակիրներին մինից որ ազգականներին ուղղած
նամակը, որ մենք առթիւ ունեցանք տեսնելու,
դարձաւ զգացնել է տալիս արժանաւոր հո-
գեորականի ներկայութեան անհրաժեշտութիւնը
Սիբիրի մէջ թէ արտոյւնած գաղթականներին հո-
գեպէս միջնորդելու և թէ բանտարկեալների
վշտերը ամբողջում համար: Չը պէտք է մոռանալ
որ հանգամանքների բերմամբ, երբեմնայեալ ար-
տորով են նոյն իսկ անմեղները և թէ բացի
դրանից որքան եղեռնագործներ անկեղծ զղջու-
մով դառնում են զէպի նախախնամութիւնը և
իրանց անցեալ մեղքերի քաւութեան մտքով պա-
շարժած միջոց են որոնում հաշտվել իրանց խղճի
հետ: Հեռու ծննդավայրից՝ ազգականներից, ըն-

կերներէց, հաւածված մարդկային ընկերութիւնից
իրեն մի մեծակար անդամ, զրկված մարդկային
իրաւունքներից, նոյն իսկ լոյսից ու թարմ օդից՝
տառապում են տաժանակիրները, որ և է դուցէ
բոզեական սխալի համար ամբողջ կենքը փչաց-
նելով: Հէնց այդպիսիներին պարտաւոր են
մարդիկ, իբրև բանական էակներ, միջնորդել,
բաշխելու և ուրիշ միջոցների հետ միասին ար-
ժանաւոր և հոգեպէս միջնորդող հոգեորականը
մեծ գործ կարող է կատարել»:

ԿՈՐՍԻՅ մեզ գրում են. «Չը նայելով յորդ
անձրևներին և ճոխ բուսականութեանը՝ հայր
գինը այստեղ չէ է ժամանում: Ընդհակառակն,
ալիւրի գիւղը 1 ր. 60 կօպէկից բարձրացաւ
մինչև 1 ր. 80 կօպ. պուրը: Չբարձր մարդկանց
համար սարսափելի ծանր է այդ գնով հաց առ-
նելը: Ասում են, որ թանգութեան պատճառը
դանազան շահամոլներն են, որոնք գիւղից գիւղ
չըջելով հաց են առնում, ուստի բողբոջ շուկան
մնում է պարսպ: Եթէ այդպէս շարունակվի՝ ա-
ւելի ևս կը թանգանայ հացը: Յանկալի էր որ
գէթ նահանգապետը արգելէր դանազան փերե-
զակներին արուեստական կերպով մարդկանց
անհրաժեշտ պիտոյքը թանգացնելը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կրկին ՄԻ ԲԱՆԻ ԽՕՄԲ ԲՐՈՒՆ-ՍԵԿԱՐԻ ԶԵԿՈՒՑ-
ՄԱՆ ՄԱՍԻՆ

«Մշակի» № 67-ի մէջ հաղորդել էինք ֆիզիո-
լոգ Բրուսն-Սէկարի զեկուցումը, որը նա արել էր
Պարիզի մարդաբանական ընկերութեան վերջին
ժողովում: Թէ եւրօպական ամառը և թէ Ռու-
սաստանի շատ լրագիրներ «Չը կայ այլ ևս մե-
րութիւն», «Մարդու անհատութիւնը և այլն»
վերնագրերով հրատարակեցին Բրուսն-Սէկարի զե-
կուցման բովանդակութիւնը: Այդ զեկուցման ա-
նիթիով «Մշակի» մէջ մի յորում տպագրվեցաւ
կազմածքի մասի ֆիզիոլոգիական անհրաժեշ-
տութեան՝ իբրև ծերութեան հետեանքի մասին:

Այժմ «La Societe de Biologie»-ի սեփական
հրատարակութեան վերջին համարից և բժշկական
լրագիրների թէֆերատներէց երևում է, որ պրօ-
ֆէսոր Բրուսն Սէկար իր փորձերով և հետազոտու-
թիւններով ճշնում է ապացուցանել, որ մեր կազ-
մածքի մասնները (желёзы) բացի իրանց ֆի-
զիոլոգիական հիւթ ազատութիւն և հիւթ-
արտադրութիւն գործունէութիւնից, կազ-
մածքի վրա ազդում են արեան հետ խառնվող
իրանց այլ և այլ պրօդուկտներով: Եւ նա մի-
նակ է բերում ներքինութեան ենթակիտ մա-
նակներին ու երիտասարդներին, որոնք բարձր
կան և ֆիզիկական խիտտ այլանդակ փոփոխու-
թիւններով, աչքի են ընկնում իրանց անգորու-
թեամբ և մտաւորական թուլութեամբ: Նմանա-
պէս մի և նոյն երևոյթները ծերունի զիտանկա-
նը նկատում է և յայտնի անբարոյական արտե-
րի անհաստեղ եղած մարդկանց մէջ: Այսպիսի
փաստերը Բրուսն-Սէկարի մէջ միտք էին յղացել որ
testicules-ները (ամոր ձիւնները) բացի իրանց
ֆիզիոլոգիական նշանակութիւնից, կատարում են
և ուրիշ դերեր մարդու կազմածքի ամրապն-
դութեան համար:

Բրուսն-Սէկար շատ փորձեր է արել testicu-
les-ներ մի կենդանուց մի և նոյն տեսակի միւս
կենդանու մէջ տեղափոխելու համար և միայն մի
անգամ յաջող հետեանքի է եկել. և իբրև թէ
այդպիսի օպերացիայից յետոյ պատահ և թոյլ
կենդանու (չանք) սեռական յատկութիւնները
վերանորոգվեցան: Ալեքիւն ժամանակները Բրօ-
ուսն-Սէկար թողրց այդ միջոցը և իր նպատակին
օրակէլ պատահ կենդանիների կաշու տակ կամ ջա-
հիլ կենդանիների testicules-ները վնասական արելու
և կամ նոյն իսկ տրորած testicules-ներէրց
ստացած հեղուկը: Այդպիսի օպերացիաների ան-
շնասակարութիւնը տեսնելով, նա սկսեց փորձե-
րը իր վրա անել, և իր կաշու տակ սրկեց ծովի
խոչորի testicules-ներէրց և այդ գործարանին յա-
տուկ վնաս-երակի արելից տրորելով պատրաս-
տած հեղուկը: Այդ օպերացիան աստիճանաբար
պատճառում, կաշին կարգաւորում է և բարձրման
նշաններ էին երևում, թէպէտ և բոլորն էլ ան-
վնաս էին անցնում փորձը ցոյց տուց, որ ֆի-
զիոլոգիական հետեանքները շատ արդիւնաւոր
էին, ջլային գործունէութիւնը ամենայն կողմից
բարձրացաւ, մկանունքային ոյժը աւելացաւ, մի-

զափամփուշտիկ և աղիքների թոյլ գործունէու-
թիւնը վերականգնվեց, որ ծերունի զիտանկա-
նը վաղուց էր կորցրել, մտաւոր աշխատութեան
ընդունակութիւնը դորացաւ. «Ես ստացած հետե-
ւանքների մանրամասնութիւնները չեմ ուղում
յայտնել», ասում է զիտանկանը, «բայց կրկնում
եմ, ջլային գործունէութիւնը ամենայն կողմով
աւելացաւ, իմ պատրաստված հեղուկի սրկու-
մից յետոյ կարծես թէ երիտասարդութիւնս վե-
րականգնեցաւ, կարելի է ես ցնորքի կամ մի
տեսակ ինքնախարէութեան զոհ էի, բայց
կարծում եմ որ ոչ» իսկ թէ որքան ժամանակ
տեղեկ երիտասարդութիւն վերականգնող նոր մի-
ջոցի ազդեցութիւնը, — թէֆերատից չէ երևում:
Մարդաբանական ընկերութեան անդամները այն-
քան էլ հաւատ չընծայեցին ծերունի զիտանկանի
գործերի հետեանքին: Գիւթ օն պ ա լ է. և
Ֆ է ր է բ ժիշկները կարծիք յայտնեցին, որ այդ-
պիսի հետեանք, ինչպէս էլ որ նկարագրում է
Բրուսն-Սէկար, կարելի է ստանալ և պ է ր ի-
ֆ է ր կ ա կ ա ն զրգոտութիւնից եւ, որը յա-
ճակակի կրկնվելով, եթէ բարձրման երևոյթներ
չառաջանեն էլ, շատ անգամ զինամօզնեկա-
կան երևոյթներ կարող են պատճառել, որոնք և
արտայայտվում են զլխաւոր կենսական ֆունկ-
ցիաների շատ թէ թէ զիտանկան արթնութեամբ
ինչպէս յայտնի է կաշու տակ զրգոտական նիւ-
թեր սրկելով կարելի է շատ թէ թէ երկար
կենք տալ այնպիսի հիւանդներին, որոնք իրանց
հիւանդութեան որպիսութեամբ մահուան են դա-
տապարտված: Ահա այս կէտից է նայում Գիւթօն-
պայի՝ ծերունի զիտանկանի փորձերի վրա. իսկ
Բրուսն Սէկար վնասականապէս ասում է, որ կաշու
տակ սրկած ոչ մի ուրիշ նիւթ չէ տալիս այն զրա-
ցողութիւնը, որ ինքն զիտանկանը կրել է testicu-
les-ներէրց պատրաստված հեղուկի սրկումից:
Ապա ուրեմն շատ մեծ համարձակութիւն է
հիմնվելով այդ տեսակ փորձերի վրա՝ ասել թէ՛
այլ ևս ծերութիւն չը կայ»:

ՍԱԼԱՐՔԻՆԻ ՅԱՅՏՆԱՄ ՄՏԻՔԵՐԸ

Լոնդոնից «Հիւսիսային հեռագրական գործա-
կալութիւնը» հեռագրում է յունիսի 17-ից հետե-
ւեալը. «Հայաստանի դէպքերին վերաբերեալ հար-
ցապնդումների առիթով, Սալարքի լորդերի ժո-
ղովում յայտնեց, թէ անկասկած է, որ Թիւրքիան
Հայաստանի վերաբերմամբ պարտաւորութիւններ
է յանձն առել: Անգլիայի և միւս պետութիւննե-
րի առաջ, բայց ինքն համաձայն չէ այն կարծի-
քի հետ, թէ Անգլիան պատասխանատու է այդ
պարտաւորութիւնների իրագործման համար:
Այդպիսի պատասխանատուութիւնը Անգլիան յան-
ձն առնել չէ կարող: Գրա հետ միասին Սալար-
քիի հաղորդեց, որ Անգլիայի ազդեցութիւնը
մինչև 1877 թ. առաջ շատ մեծ էր այն պատ-
ճառով, որ Թիւրքիան երախտապարտ էր այն
ժառանգութիւնների համար, որ Անգլիան նրան
ցոյց էր տուել: Բայց 1877 թ-ի պատերազմի
ժամանակ Անգլիան չը պաշտպանեց Թիւրքիային
և այդ պատճառով Անգլիայի ազդեցութիւնը միւս
պետութիւններից աւելի չէ: Յիբախի, — աւելացրեց
Սալարքի, — Անգլիայի պարտաւորութիւնն է,
որ նա ամեն տեղ, որտեղ ներգործութիւն ունի,
աշխատէր բարեւաւայեցել թրիտոնեաների և միւս
եղբայրակիցների զոտութիւնը, բայց նա կարծում
է, որ Հայաստանի անցքերի վերաբերեալ լուրե-
րը չափազանցած են: Բ. Գուտը այն միտքն է
պաշտպանում, որ Հայաստանում ծանր կեղեկու-
թիւններ չեն պատահել, բայց մի և նոյն ժամա-
նակ են, Բ. Գուտը չէ կարող հաստատել, որ
այդ երկրում օրինակներով չը գոյութիւն ունի,
և որ այնտեղ լեռնային յեղեղի ձեռքով հարա-
տահարութիւններ չեն կատարվում: Բ. Գրանը
կարելի է յանդիմանել այն պատճառով, որ նա
աւելի նպատակայարմար միջոցներ չէ ձեռք առ-
նում աւարաբուծութիւնների առաջն առնելու հա-
մար, բայց զրա հետ միասին աչքի առաջ պէտք
է ունենալ և այն, որ Թիւրքիան թոյլ և աղքատ
է: Մինիստրը խոստացաւ ժողովին զօլուսնեա-
նեկ ներկայացնել, որոնցից ժողովը կը տեսնէ,
որ Հայաստանում օրինակներով չը կայ, և
որ այդ բանում Թիւրքիան մեղաւոր չէ: Գլխա-
ւոր չարիքը — այն կրօնական և ազգային ատե-
րութիւնն է, որը աւելի է ստատկանում այնպիսի
վնասարարութիւնների շնորհով, ինչպիսի են այս-
օրվայ վիճաքանութիւնները: Այդ պատճառով
մինիստրը խորհուրդ է տալիս՝ այդ չարիքները

վերացնելու համար դիմել ժամանակին և գործե-
լու աւելի խաղաղ միջոցներին»:

ՄԱՆԻՍԱՅՈՒՄ ՊԱՏԱՀԱՄ ԴԵՊԵՐԸ

«Մշակի» անցեալ համարներից մէկում հաղոր-
դեցինք, որ Զմիւռնիայի մօտ գտնվող Մանիսա-
յում այս օրերս պատրիարքական փոխանորդ
Յովսէփ վարդապետ Այվազեանի ղեմ կատարի
ցոյցեր են արել մի քանի խմբեր, որոնք համար-
վում են Զմիւռնիայի նախկին առաջնորդ Մեղի-
սեղէկի կուսակիցներ: Այդ մասին Կ. Պօլսի լրա-
գիրները տպագրել են շատ մանրամասնութիւն-
ներ՝ իրանց կողմից գանազան դատողութիւններ
անելով: Աւելորդ չենք համարում «Արևելքի»
Զմիւռնիայի յունիսի 7-ից գրած թղթակցութիւ-
նից առաջ բերել հետևեալ մանրամասնութիւնը:

«Երբ Պատրիարքական Փոխանորդ Յովսէփ
վարդապետ Այվազեան քաղաքս կը հասնի, Մա-
նիսա կը շարունակէր իր ծանօթ ըմբօստ ըն-
թացքը, իրեն զուրկ ունենալով թաղական խոր-
հուրդը և Մուշկան անուն քահանայ մը: Տեղույն
երիտասարդութիւնն և ողջամիտ մասն ինչպէս ի
սկզբանէ անտի, չէին դադարել բողոքելէ ասոնց
անհաճոյ ընթացքի դէմ: Նորընտիր կրօն. և ֆա-
ժողովներու խառն նստի մը մէջ կորոյրի որ
Յովսէփ վարդապետ անձամբ երթայ ի Մանիսա
վերջին օրերը հրաժարեալ թաղական խորհրդին
տեղ առժամայ թաղական խորհուրդը մը կազմէ,
և ընդ մանիսացի երկու քահանայներուն ալ հոն
քահանայագործել տայ և այլն: Անցեալ չորեք-
շաբթի օր՝ Պատրիարքական Փոխանորդ Հայրը
իր հետևորդներով կուղևորի Մանիսա, երկույն
իսկ հրաժարեալ թաղական խորհրդայ անդամը
որի մի քանի ընկերներով անպայատ ցոյց մը
կընեն իրեն տեղույն առաջնորդարանին մէջ:
Ասոնց պարագովը՝ Հերուկեան տեսնելով որ
առաջին փորձի մէջ պակաս է բարոյական
գորտութիւն, անոր տեղը կը կարծէ լրացնել օղիով
ու զինիով: Ուստի խումբ խումբ մարդիկ կարբե-
ցնէ եկեղեցւոյ մօտ գտնուած զինատուններու
մէջ և ամեն անգամ որ փոխանորդ Հայրը թա-
ղական խորհրդի կնիքը վերառելու կեննէ Յովսէփ
իր վրայ կը զրկել: Որբաբն առաւուս Յովսէփ
վարդապետ կրկին կուղէ ակաբայն կնիքը հրա-
ժարեալ թաղ. խորհրդի անդամներէն. ասոր ա-
տենապետը կը յայտնէ թէ՛ Յովսէփ Հերուկեանի
տաւած է գայն: Սա կէս օրի մօտ կը ներկայանայ
Ն. Սրբուծեան Յովսէփ Ծ. վարդապետ իր լըն-
դիրը կը կրկնէ, բայց ամեն ժամանակէ աւելի
բուռն ընդդիմութիւն մը կը գտնէ Հերուկեանի
կողմէ՛: «Ես թեղ կնիք չեմ տար, զեղք չեմ ձան-
չեր, Պատրիարքարան չեմ ձանչեր, չեմ ձանչուր
որ թաղական խորհուրդը ընտրես, եւ կընտրեմ,
Մանիսայի ամբողջ ժողովուրդն ինձի հետ է, ես
ով ուղևոր գայն կընտրեմ և այլն» խօսքերով: Հիշք
այդ ռուպէին ներս կը մտնէ Հերուկեանի փեսա-
ցուն, Միսաս անուն մէկը, մէկէն ի մէկ անկուր
հայտնաբերով և լորձոնք ժայթկելով փոխանորդ Հոր
վրայ կը յարձակի գաւազան ի ձեռին. Հերուկեան
ևս տեղէն ցատքելով անոր կը հետևի և ձեռքի
գաւազանը վերցնելով չը պատկառի Հայր Սրբի
վրայ իջնելու. հազիւ հազ այս երկու սպիտա-
ները կը սկսին զանակոծութիւնն և ահա արբեալ-
ներու ուրիշ խումբեր ներս կը խուժեն. մի և
նոյն միջոցին եկեղեցւոյ զանգակները կը զար-
նուին խառնարաններու կողմէ և հարկուրտ
այրեր, կիներ, աղջիկներ և տղաք անոր բակը
կը խառնին, առաջնորդարան կընեն, կը հայտնեն,
կը նախատեն, զարկէք, վար նետեցէք, վար կը
պոռան: Փոխանորդ Հայրը «Թողէք, եւ կերթան»
կը գոչէ, ոչ որ կը լին, ոչ որ կը թող զինք,
առաջնորդարանի անհուղներին վար զօրեկու
փորձեր կընեն. Ն. Սրբութիւնը կաղաչէ, կը
պաղատի, վայրագ խումբը կատարած է, մինչև որ
ոստիկանութիւնը կը հասնի, հաղիւ կը յաջողի
ամբողջ ճեղքել և մօտիկ Յովսէփ վարդապետի՝
գայն ամենի պետերու ձեռքէն խնդու համար.
Փոխանորդ Հայր Սրբը գրկով՝ ողբապառ կը
փոխադրուի տեղույն վարչական ժողովը անդամ
Աւետիս էֆէնտի ֆալսեղանակի տունը:

Այս դէպքի գոյժ հետեանալ օրը կէս օրին կը հաս-
նի Իզմիր. ազգային վարչութիւնն անմիջապէս ի
խորհուրդ կը գումարի և ղեմում կընէ թէ բարձ.
վալիին և թէ ընդհանուր դատախազին քննու-
թիւն բանալ՝ յանցաւորները պատմել տալու
համար: Մի և նոյն միջոցին տասն երեսիխան-
ներ ժողովին կը ներկայանան. կորոյրի որ ներ-
կայ գտնուող ֆաղ. և երեսիխանական ժողովը

անդամը հետևել օր Մանիսա երկուս կրօն. ժողովուրդը Առնապատի առաջնորդութեամբ թէ Յովսէփ վարդապետի վիճակն, որու համար կըսուէր թէ անկողնոյ կը ծառայէ, և թէ իրաց կացութիւնը մտանքն իմանալու և անոնց դարման ու միջոց խորհելու համար Հետեւել օր՝ այն է կիրակի առտու ժամը 8 1/2 ժամ, կրօնական ժողովոյ անդամը և տասն երեսփոխաններ իրմիտն կը մնին շողեկառքով և Մանիսա հասնելով, կերթան Յովսէփ վարդապետը տեսնելու Հայր սուրբը կը պատմէ իր դժբաղդ արկածն. ոչինչ կը չտարապահէ. Այվազեան Հայր Սուրբ դասակարգութեամբ և սաստիկ իմն բառին բովանդակ նշանակութեամբ, զինքը Առաջնորդարանի վերէն վար նետել վորձեր են, դետին քարշեր են, նախապէս, թըր, հայտոյր, մագերէն ու մորուքն քարշեր և միջնէ իսկ մորուքը ամիւրեղ ուղեր են. ընդունած բռնիք հարուստներէն կուրծքը բաւական մնասուած է. կը հազայ չոր հազով մը և կողից ցաւ մ'ունի, մարմնոյն վրայ թեթև վէրքեր ճընշուածի ճնշուածի և այլն պակաս չեն, թեկն վրայ ալ խառնածքի երկու նշաններ կերկրն. կառավարութեան բժիշկը ամեն ինչ ճնշած, ստուգած և տեղեկագրած է:

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Վիլհելմ կայսրը մտադրութիւն ունի այցելել Նորվիգիա:

— «Journal de Genève» լրագիրը յայտնում է, որ Շվեյցարիայի և Գերմանիայի յարաբերութիւնը աւելի լաւ կերպարանք է առնում:

— Խոսելով զերմանական և չվէյցարական վերջին ընդհարումների մասին, իտալական միջնորդ կրիստի այն միտքը, յայտնեց, որ այդ բանը ոչինչ կապ չունի Նորվիգիայի հետ:

— Բերլինից լուր են հաղորդում, որ գերմանական կայսրը և կայսրուհին այցելելու են իտալական թագաւորին և թագուհուն:

— Գանիայի կառավարութիւնը մտադրութիւն ունի շատացնել իր հիւպատոսներ թիւը Պարսկաստանում, և այդ էլ՝ զլիւսարագէտ այն պատճառով, որ Գանիան ուղում է առևտրական յարաբերութիւններ սկսել Պարսկաստանի հետ, մանաւանդ Պարսկաստանի երկաթուղային գծերը անցկացնելուց յետոյ: Կառավարութեան ցանկութիւնն է այժմ ունենալ 10 էմբանում մի զլիւսար հիւպատոս:

— Սերբիայի խնամակալութիւնը՝ Ալէքսանդր թագաւորի օժանտ առիթով, հրահրել էր Միլան թագաւորին ներկայ լինելու այդ հանդիսին Այդ առիթով իր շնորհակալութիւնը յայտնելով, Միլան ցաւակցութիւն է յայտնում, որ Գարաշանին հանդիսին ներկայ չէ եղել:

— Աստրիական մամուլը վերջին օրերս շատ է խոսում Բուլղարիայի և Աստրիայի մտակ յարաբերութիւնների մասին, այն միտքը յայտնելով, որ Աստրիան պէտք է ավակցի Բուլղարիային՝ թիւրքիայից միանգամայն անկախ դիրք ստանալու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խառնիկ համալսարանի ֆիզիկո-մաթէմատիկական բաժնի ուսանող Լ. Վ. Ելիւր, առ զի ֆոն անունով մի գործը է հնարել, որի օգնութեամբ, ինչպէս փորձը ցոյց տուց, իւրաքանչիւր խուզ կամ խուզ և համար մարդ շատ պարզ կերպով կարող է լսել խոսակցութիւն, երաժշտութիւն և այլ ձայններ և շնչմամբ արտասանած բառերը Գործիքը բաղկացած է գոտիանման մի կլիկոնական սարքից, գոտիի չափաբաժնից, որը ներկայացնում է մի մանրախոս և երկու ամենափոքրիկ մանրախոսներ (միկրոֆոն), որոնք դրում են ականջախողի և ականջախոցի միջև: Գործիքը շատ դիւրին գործադրելի է և կարելի է դիւրութեամբ տեղադրել սերտուկի տակ: Հնարողը այդ գործիքը Բերլինի խուզուածների ճեմարանի դիրեկտոր պրոֆէսոր Արնոլդին է ուղարկել, ինչպէս նաև կարծիքը, թէ որքան նըպաստակարար է իր առ զի ֆոնը խուզերի գործադրութեան համար:

Արմաւիրից մեջ գրում են. «Այստեղի կրկնու դպրոցների հարցաքննութիւնները վերջանալուց յետոյ աշակերտութիւնների շատերի ծնողներ և հոգաբարձուների մի մասը՝ իբր շնորհակալութիւն վարձուել օր. Մ. Մակարանցին նրա վեց տարեկան եւսանդուն աշխատութեան համար՝ նուիրելին մի ոսկեգծ սկուտեղ»:

Այս օրերս Պարիզում, աշխարհագրական ընկերութեան դահլիճում բացվեց կանանց կոնգրէսը: Ներկայացուցիչներ կային Միացեալ-Նահանգներից, Անգլիայից, Ունգարիայից, Լեհաստանից և Շվեյցարիայից: Ճառասոս կանանցից մէկը կանանց ղէմ գործը յրաժ մի քանի ճնշումների պատճառը համարեց հոգեբանականութիւնը: Կանանց կոնգրէսի նպատակն է վերադարձնել կանանց իրանց մարդկային իրաւունքները և արժանաւորութիւնները: Կոնգրէսը զրա հետ միասին բողոքում է պատերազմի և միլիտարիզմի դէմ:

Պարսից Եւրոպիայի Անտիպոլիս հասած օրը ի պատու նրա, բորսան և բանկերը փակվեցին:

Միջկանում այս օրերս մի հետաքրքրական դատ կար: Ֆինլանդիայի հարցը, թէ արդեօք հաստատ ամուսնութիւն է այն ամուսնութիւնը, որով մի գերաստան ընդ վրա ամուսնանում է մի գերաստանուհու հետ՝ պիէտայի պահանջի համեմատ: Այլանէր անունով գերաստանը, որը նորերս այդ կերպով ամուսնացել էր գերաստանուհի Բուսկիլիի հետ, յայտնեց իր իրաւունքները նրա վրա, իբրև իր օրինակ ան կնոջ վրա, հիմնվելով այն բանի վրա, որ ինքը բնի վրա, նրա հետ ամուսնացաւ փոխարքան համաձայնութեամբ և երկրի մէջ ընդունված ձեւերի համեմատ: Գերաստանուհին բողոքում է այդ բանի դէմ, բայց յամառ գերաստանը պնդում է իր ասածի վրա, յայտնելով օր. այդ գործը նա կը պայտույանի ամերիկական բոլոր դատարաններում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻՏԵՐԱԿ, 24 յունիսի: Այսօր այրվեց այստեղի բաղաջային թատրոնը:

ՍՕՏԻՆ, 24 յունիսի: Բուլղարական կառավարութիւնը՝ Ամերիկայի մի խումբ գրամատերերի միջոցով՝ 25 միլիոն ֆրանկի փոխառութիւն արաւ:

ՀՈՒՍ, 24 յունիսի: Չը նայելով կիսապաշտօնական հերքումներին, «Diritto» լրագիրը պնդում է, որ իր հաղորդած լուրերը, որոնք վերաբերում են այն հարցին, թէ իտալական կառավարութիւնը պարտաւորվել է Աստրիայի տրամադրութեան ներքոյ զննել երկու զորաբաժին՝ Ռուսաստանի դէմ պատերազմը ծագած ժամանակը, ճիշդ են: Այն միտքը, որ իտալացիք պէտք է կռու գնան աւստրիական զրօշակի տակ՝ շատ զրգուած է իտալացի հայրենասէրներին:

ՎԻՆՆԱ, 24 յունիսի: Բուլղարական կառավարութիւնը 25 միլիոնի փոխառութիւն արաւ Ամերիկայի մի խումբ գրամատերերից՝ Յարբրադ—Վակարէլ և Եամբուլի—Բուրգաս երկաթուղիների գրաւականով:

ԼՕՆԻՕՆ, 24 յունիսի: Երէկ հրդեհ պատահեց «Surrey Commercial Dock»-ում, որտեղ Ռուսաստանից և Շվեյցարիայից բերած մեծ քանակութեամբ փայտեղէն կար: Մեծ մասը այրվեց: Վնասը հասնում է մինչև 60.000 ֆրանկի:

ՊԱՐԻԶ, 24 յունիսի: Բարձրագոյն ատենը կը դատի Բուլանտէին՝ մեղադրելով նրան միայն պետութեան դէմ օրոգայթներ լարելու և արձուանական փողեր վաճառելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 25 յունիսի: Հրատարակված է ժողովրդական լուսաւորութեան միջնորդի շրջաբերականը, ուսումնարանական շրջանների հոգաբարձուների ուղղած, որը վերաբերում է զինուորական մարմնամարզութեան դասաւորութեանը: Մարմնամարզութեան դասաւորութեան նոր ծրագիրը պէտք է գործադրութեան մէջ մտցնել 1889/90 ուսումնական տարեկան սկզբից բոլոր դպրոցներում, ուր արդէն մարմնամարզութիւնը աւանդվում է, այլ և ըստ չափու կարելիութեան, ժողովրդական տարրական դպրոցներում: Մարմնամարզութեան դասաւորութիւնը ուսուցչական սեփականութեամբ և ինստիտուտներում կը յանձնի այնպիսի անձանց, որոնք եղել են Պետերբուրգի մարմնամարզութեան ժամանակաւոր կուրսերում, եթէ զրանք բաւական չեն լինի, այն ժամանակ դասատուներ կարող են հրահրել զօրաբաժինները: Ժողովրդական տարրական դպրոցներում մարմնամարզութիւնը կարող են զաս տալ պահեստի մէջ գտնվող զինուորները: Ուսուցչական սեփականութեամբ և ինստիտուտներում չը պէտք է ընդունվին ֆիլիկական պակասութիւններ ունեցող երիտասարդներ, որովհետեւ

ցանկալի է, որ ստորին կարգի դպրոցների վարձուպետները իրանք սովորեցնէին երեխաներին մարմնամարզութիւն:

ՊԻՆՆԱ, 26 յունիսի: Չեխիում բաղաջային ընտրութիւնների ժամանակ հին-չեխերը ստացան 21 տեղ, նոր-չեխերը 10 տեղ, գերմանացիք ստացան իրանց նախկին տեղերը:

ՎԻՆՆԱ, 26 յունիսի: «Neue Freie Presse» լրագիրը խոսելով ընտրութիւնների ժամանակ նոր-չեխերի տարած յաղթութեան և բուսկներին ու լեհացի զիւղացիների Գալիցիայի սէյմի մէջ մտնելու մասին, հաւատացնում է, որ Աստրիայում փերայեցի կուսակցութիւնները գնում են զէպի իրանց անկումը:

ԲԵՂԳՐԱԿ, 26 յունիսի: Այսօր վերադարձաւ միտրոպոլիտ Միլայիլ: Թագաւորը, խնամակալները և միւսները այստեղ կը գան ամսիս 27-ին: Միլան թագաւորին այստեղ սպասում են յուլիսի 1-ին:

ԳՐՈՅ, 26 յունիսի: Գարաշանին մնում է այստեղ կրկին ժամանակով և վարձել է իր համար բնակարան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲՕՐՈՒՆ ԾՆՆԻՍԻ 23-ին

Երէկ օրը 10 ֆունտ արծեւ . . . 97 ր. 80 >
Բերլինի վրա 100 մարկ . . . 47 > 85 >
Փարիզի վրա 100 ֆրանկ . . . 38 > 70 >
Ոսկի . . . արծեւ . . . 7 > 78 >
Մաքսային կուպոններ . . . 155 > 50 >

| | | |
|--|-------------------------------|-----------|
| Արծաթ | — | 1 > 13 > |
| Բորսային դիվիդենդներ | — | 6 > 70 > |
| Պետական 5% օտոմս 1-ին շրջանի | 99 | > 37 > |
| — | 2-րդ | 98 > 75 > |
| — | 3-րդ | 98 > 62 > |
| — | 4-րդ | 98 > 62 > |
| — | 5-րդ | 98 > 62 > |
| — | 6-րդ | 98 > 62 > |
| Նոր 4% | 83 | > 50 > |
| Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. | 99 | > — > |
| — | 2-րդ | 99 > — > |
| — | 3-րդ | 99 > — > |
| Ներքին 5% օտոմս փոխառութ. | 269 | > — > |
| — | երկրորդ | 244 > — > |
| 5 1/2% ընտոս | 102 | > 75 > |
| Ոսկեայ ընտոս | 174 | > — > |
| Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. | 142 | > 50 > |
| Նոր երկաթուղային ընտոս | 98 | > 87 > |
| 5% զրաւակ. Թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մտո. | 139 | > 25 > |
| — | Թղթադ. | 93 > — > |
| Գրաւ. թղ. Ազն. բանկի | 98 | > — > |
| Գիւղական բանկի | 102 | > 25 > |
| 6% զրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ. | 97 | > 75 > |
| — | Գուլթայիսի—18 և 43 տ. | 98 > 50 > |
| Ս. Պետերբուրգի բաղաջային օրդի-գացիաներ | 95 | > — > |
| Մոսկվայի բաղաջ. օրդի-գացիաներ | 94 | > — > |
| Օղէտայի | 95 | > — > |
| Թիֆլիսի բաղաջ. կրեդ. ընկ. օրդ. | 84 | > 50 > |
| Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է: | | |

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՅ
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԳՐԱՄԱԳՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ 9.000.000 ՌՈՒՐՈՒՅ ԱՆԵՒ Է:

Ս.ՄԵՆԱՄԵԾ ԵՒ ՄԻԱԿ ՀԱՅՐԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐԸ ԲԱՅԱՌԱՊԷՍ ԶԲԱՂՎԱԾ Է

ԿԵԱՆՔԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՎ՝ ՓՈՒՍՏԱՐԱՅ ՍԿՁԲՈՒՔՆԵՐԻ ՎՐԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ Է

- 1) ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՐԱՄԱԳՆՈՒԹԻՒՆԵՐ՝ ապահովագրածի մասին ղէպընում
- 2) ԳՐԱՄԱԳՆՈՒԹԻՒՆԵՐ ՑՄԱՀ՝ ծերութիւնը ապահովելու և աղջկներին օժիտ տալու համար:
- 3) Մշտական արդիւնքները, այրիների թողանքները, թաղման փողերը և այլն: Սակայնքները և մանրամասն բացատրութիւնները տրվում և ուղարկվում են ձրիաբար:

Գործակալութիւնը բացված է Ալէքսանդրապոլում, Վէրբուլի քարավանատարայում, № 4: Ալէքսանդրապոլում գործակալ նշանակված է Կ. Ի. Ապոսի:

3—3

Գլխաւոր գործակալութիւնը Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24:

Մարմնի մասերը, մանաւանդ տոնների մասերը փոխելու պահպանող փողի

ԳԱԼՄԱՆԻՆ

ձախվում է ղեկավարներ և իրօքիտների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և կայսրութեան բոլոր քաղաքներում ԳԼՄԱՆՈՐ ՊԱՀԵՍՏ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հնարողը, ղեկավարն տիրոջ, Ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՍԿՈՒ մօտ, Էլէկտրալայայա փողոց, № 39. Գալմանիսի մեծ արկը արժէ վարձաւայում 50 կ., փողքը 30 կօպ:

ՊԵՏԻ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՆՈՒՄՆԵՐԻՅ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և փարիզի ցուցահանդիսի մեղայնները:

Ք. 24869 2—10 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянь“, публ. ч. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшагъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Հրահրում է երկու բարձրագոյն կրթութիւն ստացած ուսուցիչ ուսուցչ լեզուի, ընդհանուր պատմութեան և ընդհանուր աշխարհագրութեան դասերի համար, և երկու հմուտ մանկավարժ երկրորդ նախաընթացների երկու զուգընթացների համար Առաջինների վարձատրութիւնը պայմանաւոր է, իսկ երկրորդներինը հինգհարկան լուրջի ջանկարողները, ներկայացնելով իրանց ուսումնական վիսյադրերը, թող զիմեն զարանուղի տեսչին հետեւել հասցեով՝ Эривань, Доктору Арутюнянцу.

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ

աւանույց ամիսներին Թիֆլիսում գտնվելով, ցանկանում է՝ մանաւոր դասեր ունենալ զիմնադրական աւարկաներից: Համաձայն է թէ պարտաւոր աշակերտներ և թէ զիմնադրային աշակերտների հետ կրթութիւններ անել: Հասցեն. Куки. Семеновскій переулокъ, домъ Картвелова № 2